

ենթարկել իր կանխահասուլթեան, իր ուսանողութեան շատ փայլուն ամառ: Դիտողութիւններ, բաւական ըստ-ւար, կը հաստատեն այս կարգի դէպքեր, իմաստի կրկէս-ներէ: Ոմանք քսանին չհասած՝ իբրեւ զմայլելի, բայց անվերադարձ նախախալիք մը կ'ապրին, յորդ ու փար-թամ, ու կը սպառեն ինչ որ քսանին յաջորդ քառասուն տարիները կը վերապահեն մարդոց մեծ մասին իբր փթթում, ծաղկում ու քաղցրագին պտղաւորում: Երբեմն մահը անփոխարինելի իմաստութեամբ մը կը միջամտէ՝ իննայելու համար սա շողարձակ, «ցողաթուրմ» գարուն-քին՝ ամօթը երաշտ ամառին ու ստերջ աշունին: Անոնք, այդ «հանճարեղ» տղաքը կը փակուին, կը կնքուին քսանի դուռներուն, իրենց հեքիաթը ձգելով մեր կարճ հիացու-մին: Ուրիշներ ու շատեր են ասոնք, պիտի տառապին յարմարելու համար մեր գիտցած կեանքին, լայն, խոր-տուբորտ, սեփ-սեւ կեանքին ու ասոր հազար-հազար խութերուն, որոնց սանդուխովը կը քայլենք, պիտի քայլենք դէպի մեր սեփական անդունդիկը, մեր փոսը: Ո՛վ կոշտու-թիւնը, վրիպանքով դառնակարան տրտմութիւնը, չորս պատերուն արքայութեան (գրասենեակ) վարժուած ան-խուսափելի գերութիւնը պատանութեան սա պսակաւոր-ներուն, որոնք փուշ պսակն իսկ պիտի չձգեն իրենց ճակ-տին, սուզուելու համար, անդարձ, մռայլութեան, միջա-կութեան ծոցը...

Ձգելէ առաջ սա փոքր փակագիծը ընկեր Մաթիկի ուսանողական մեծ տուրքերէն, մաս մըն ալ բա՛ն՝ իմ տպաւորութիւններէս անոր հաւատաւոր, անխուսափելի գեղումի մասին, միշտ կազմ ու պատրաստ, դիւրին, գործնական (maniable), տարագործուած (թող ներուի այս բառը), ներածուած ու բռնուած ապրանքի նորու-թիւնը, առատութիւնը, դիւրամատչելի գնովը: Այսպէս է, որ այդ դատումները կը ջանային ներկայացնել Արե-ւելահայաստանը, այս դարու սկիզբին, իր նաւթի իշխան-ներուն ահաւոր ապաբարոյութեամբը ու սանձակոտոր ախորժակներովը, իր եկեղեցականներուն տմոյն, անգե-